## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

**25 ապրիլի 2025 թ.-ին կնքված «ՀՀՎԱ-ՀՄԱԱՇՁԲ-25/1-1» ծածկագրով՝ Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պայմանագրի**

ք. Երևան «23» *հունիսի* 2025թ.

**Վարչապետի աշխատակազմը, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի**, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից և **«Շին Բարեկարգում» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սոնա Պետրոսյանի,** որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 4-րդ ենթակետը և 2025 թվականի ապրիլի 25-ին կնքված «ՀՀՎԱ-ՀՄԱԱՇՁԲ-25/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել 30 (երեսուն) օրացուցային օրով:

1.2 Հաստատել Պայմանագրով նախատեսված Վարչապետի աշխատակազմի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շին Բարեկարգում» ՍՊԸ
ք.Երևան, Շահումյան 16փող.,180/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570030299134800
ՀՎՀՀ 01315884

------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 1*
*« 25 » ապրիլի 2025 թ. կնքված*
*« ՀՀՎԱ-ՀՄԱԱՇՁԲ-25/1-1» ծածկագրով պայմանագրի*
*« 23 » հունիսի 2025թ. կնքված N 1 Համաձայնագրի*

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ համաձայն Ծավալաթերթ-նախահաշվի | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը | 90 օրացույցային օր |
| 2 | շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ համաձայն Ծավալաթերթ-նախահաշվի | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը | 90 օրացույցային օր |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը | 90 օրացույցային օր |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վարչապետի աշխատակազմ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Շին Բարեկարգում» ՍՊԸ
ք.Երևան, Շահումյան 16փող.,180/1
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570030299134800
ՀՎՀՀ 01315884

-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ